

«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ

Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում
ռեստորանային համալիրի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ



«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. Մովսիսյան

ԵՐԵՎԱՆ
Ապրիլ 2020

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ5

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ5

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ6

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ8

 4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր.....8

 4.1.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ8

 4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում..... 13

 4.1.3. Գազամատակարարում, ջեռուցում (հովացում) և օդափոխություն..... 14

 4.2 Շինարարության կազմակերպում..... 16

 4.2.1. Բնառեսուրսների օգտագործում..... 18

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ20

 5.1 Տարածքի սեյսմիկ բնութագրեր..... 21

 5.2 Բուսական և կենդանական աշխարհ 21

 5.3 Պատմամշակութային հուշարձաններ 21

 5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում..... 22

 5.5 Օդային ավազան 23

 5.6 Ջրային ռեսուրսներ..... 23

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ24

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .26

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ29

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ30

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.....31

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱ32

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ33

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ34

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ35

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՏԱՐԱԾՔԻ ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ (հաստատված)36

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....38

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....44

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ.....46

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՅՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎ47

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ51

ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ52

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ - անհատական պաշտպանական միջոցներ

ԲԱՄ - բողոքների արձագանքման մեխանիզմ

ԲԿՊ - բնապահպանական կառավարման պլան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՀՇՆ - Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր

ՆԳՀ - նախնական գնահատման հայտ

ՇՄԱԳ - շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄՆ - Շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄՄՏԿ - Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՈւԳ Պ - ուղղիչ գործողության պահանջ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Ռեստորանային համալիրի կառուցում
Ձեռնարկող	«Վելլի Բեյ» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Միկոյան 9/3
Խորհրդատու (նախագծող) կազմակերպություն	«ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ ք. Երևան, Եկմալյան փող. 6 (+374 10) 53 78 02 (քաղ.) (+374 93) 43 48 58 (բջջ.) E-mail: vamovart@mail.ru
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Կոնտակտային անձ՝ Գեղամ Բարսեղյան Հեռ.՝ (+ 374 93) 40 22 60
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ք.Երևան, Նոր Նորքի վարչական շրջան Միկոյան 9/3
Կառուցապատվող տարածքի մակերեսը	2515.0 ք.մ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Միկոյան փող. 9/3 հասցեում նախատեսված Ռեստորանային համալիրի կառուցման համար, որի նախագծումը կատարվել է «ՄՈՎԱՐԹՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ի կողմից:

Ռեստորանային համալիրի նախագիծը մշակված է Երևանի քաղաքապետի կողմից 12.03.2019թ. տրված N 01/18-07/2-11950-129 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 02.05.2007թ. N 2164833 վկայականով «Վելլի Բեյ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի սահմաններում:

Տվյալ ռեստորանային համալիրի իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ռեստորանային համալիրի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (համալիրի կառուցապատման մակերեսը կազմում է 2515.0 ք.մ):

Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՆԳՀ-ը իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան:

Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (1995) - 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ: Հոդվածներ 10, 31, 33.2 և 48 երաշխավորում են ՀՀ-ում ամբողջ հասարակության և առանձին անհատների բնապահպանական անվտանգությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության

աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների,

դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին» N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

4.1.1. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող ռեստորանային համալիրը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի Միկոյան փող. 9/3 հասցեում, որը նախատեսվում է կառուցել նախկինում այդ տարածքում գոյություն ունեցող ռեստորանի տարածքում:

Նախկինում տվյալ տարածքում գոյություն ունեցած ռեստորանը, որը բաղկացած է եղել 650.34քմ ընդհանուր մակերեսներով հավաքովի կոնստրուկցիաներից, ապամոնտաժվել է նախկին սեփականատիրոջ կողմից դեռևս նախագծային-հետախուզական աշխատանքները սկսելուց առաջ: Ներկայումս նախատեսվող գործունեության տարածքն տարածքն ամբողջովին ազատ է նախկին կառույցներից և շինարարական աղբից:

Ռեստորանային համալիրի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 2515.0 մ², իսկ ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 37040 մ² (3.704 հա համաձայն անշարք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, որը բերված է [հավելված 1-ում](#)):

Նախատեսվող գործունեության համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 12.03.2019թ. տրված N 01/18-07/2-11950-129 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2-ում](#)):

Կառուցապատման տարածքը հարթ է, ունի քիչ թեքությամբ ռելիեֆ՝ առավելագույնը 24.95մ անկմամբ (10,81% միջին ընդհանուր թեքությամբ):

Տարածքի իրադրության սխեման բերված է [հավելված 3-ում](#):

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների համաձայն, մասնավորապես.

- ինժեներա-երկրաբանական եզրակացության արդյունքներ
- երկրաֆիզիկական հաշվետվության արդյունքներ
- СНиП 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»
- ՀՀՇՆ II – 6.02 – 2006 «Սեյսմակայուն շինարարություն»
- ՀՀՇՆ VI - 13.102 - 99 «Բետոնյա և երկաթբետոնյա կոնստրուկցիաներ»
- СНиП 2.03.01-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանում կոռոզիայից»
- СНиП II - 23 - 81* «Стальные конструкции»
- СНиП III-4-80* «Техника безопасности в строительстве»
- СНиП 12-03-01 «Безопасность труда в строительстве»
- СНиП 12-01-2004 «Организация строительства»
- СНиП 21-01-97 «Пожарная безопасность зданий и сооружений»
- Руководство по устройству обратных засыпок котлованов с подготовкой оснований под технологическое оборудование и полы на просадочных грунтах (Москва, 1980).
- ГОСТ Р 52544-2006; ГОСТ 5781-82*; ГОСТ 5264-80; ГОСТ 14098-2014; ГОСТ 10922-90; СН 313-65; СН 393-78.

Կառույցի կոնստրուկտիվ սխեման լուծված է երկաթբետոնյա կարկասային կմախքով, հարթ տանիքներով՝ կազմակերպված ջրահեռացմամբ, երեսապատումը՝ քարե սալերով և բարձրորակ երեսասվաղ ներկումով: Նախատեսված է նաև դեկորատիվ երեսապատում:

«Մովարթստուդիո» ՍՊԸ-ի պատվերով 2019թ.ն «Գեոլիթ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է նախատեսվող ռեստորանային համալիրի նախագծվող շենքերի տարածքների ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ: Ռեստորանային համալիրի կառույցի հիմնատակի գրունտների ուսումնասիրության համար կատարվել են մինչև 10 մետր խորությամբ հորատման աշխատանքներ:

Ռեստորանային համալիրը բաղկացած է 4 մասնաշենքերից:

Համալիրի 1-ին և 3-րդ մասնաշենքերը չորս հարկանի կառույցներ են, որոնց առաջին հարկը կիսանկուղային է: Այս 2 մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումները նույնն են: Դրանց համակարգի լուծումը ընդունված է որպես շրջանակային կարկաս՝ միաձույլ ե/բ ժապավենային հիմքերով: Հիմքային հեծանները քառակուսի են, 800 մմ բարձրությանը, նախատեսված B20 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով:

Հարկերի բարձրությունները (հատակից հատակ) կազմում են՝ 4.5մ, 3.9մ; 4.2մ և 3.35մ:

Նախատեսվող միաձույլ ե/բ սյուները քառակուսի են և ունեն 500x500մմ չափերի հատույթներ:

Նախատեսվող կիսանկուղային հարկի պատերը նախատեսվում է իրականացնել 200 մմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնից՝ սյուների և դիաֆրագմանների իրար հետ ամրանավորմամբ և միաժամանակ բետոնացմամբ:

Աստիճանները նախատեսված է իրականացնել միաձույլ ե/բ սալերի տեսքով:

Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել բազմաշերտ, թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով շարվածքով, ջերմամեկուսացման շերտով, ամրանավորելով անցքերում ուղղաձիգ, իսկ շարքերում^ա հորիզոնական ամրանաձողերի տեղադրմամբ:

Բոլոր ուղղաձիգ և հորիզոնական ամրանները նախատեսվում է խարսխել համապատասխանաբար ե/բ սյուների և հեծանների մեջ: Միջնորմները նախատեսված է իրականացնել թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով, ամրանավորելով անցքերում ուղղաձիգ, իսկ շարքերում^ա հորիզոնական ամրանաձողերի տեղադրմամբ: Բոլոր ուղղաձիգ և հորիզոնական ամրանները նույնպես նախատեսվում է խարսխել համապատասխանաբար ե/բետոնե սյուների և պարզունակների մեջ:

Նախատեսված է մետաղական կրող կոնստրուկցիաներով հարթ տանիք, որի ծածկի կրող կոնստրուկցիաները նախատեսված է իրականացնել պատրաստի "МОЛОДЕЧНО" տիպի ФС-18-3.2 տեսակի ֆերմաներով /5 հատ/: Մետաղական ֆերմաների վրա նախատեսված է տեղադրել պողպատե ցինկապատ պրոֆիլավոր երեսարկ (H60-750-0.7 մակնիշի, ըստ ГОСТ24045-94):

Օգտագործման համար նախատեսված բոլոր ֆերմաները պարտադիր կերպով ենթակա են եռակցման կարերի ներքին շերտավորման ուլտրաձայնային ստուգման: Կոռոզիային ենթարկված ֆերմաների օգտագործումը արգելվում է:

Տանիքի որոշակի հատված (8.00 և 11.35 նիշերում) ծառայելու է որպես օգտագործվող:

Համալիրի 1-ին և 3-րդ մասնաշենքերի միակ տարբերությունը կայանում է նրանում, որ 1-ին մասնաշենքի հարթ տանիքում տեղեկայված է կաթսայատունը:

Ռեստորանային համալիրի 2-րդ մասնաշենքը երեք հարկանի կառույց է, հատակագծում բարդ կառուցվածքով, որի առաջին հարկը կիսանկուղային է:

Շենքի կոնստրուկտիվ համակարգի լուծումը ընդունված է որպես շրջանակային կարկաս՝ միաձույլ ե/բ ժապավենային հիմքերով:

Հարկերի բարձրությունները (հատակից հատակ) կազմում են 4.5մ, 3.9 մ, իսկ 3-րդ հարկում՝ 4.2 մ և 8.6 մ:

Հիմքային հեծաններն նախատեսված են B25 դասի (M350 մակնիշի) ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով՝ 800մմ և 1000մմ բարձրությամբ, 600մմ և 800մմ լայնությամբ: Հեծաններն քառակուսի են և ունեն տարբեր չափերի հատույթներ (200x500մմ, 500x500մմ, 500x600մմ, 300x480մմ և 600x1200մմ):

Նախատեսվող միաձույլ ե/բ սյուները քառակուսի են, ունեն 500x500մմ և 550x550մմ չափերի հատույթներ, նախատեսված B25 դասի (M350 մակնիշի) ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով: Միաձույլ ե/բ պատերը նախատեսվում է իրականացնել 200 մմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնից՝ սյուների և դիաֆրագմանների իրար հետ ամրանավորմամբ և միաժամանակ բետոնացմամբ:

Աստիճանները միաձույլ ե/բ սալերի տեսքով են, արտաքին պատերը բազմաշերտ, թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով շարվածքով և ջերմամեկուսացման շերտով, որոնք նախատեսվում է ամրանավորել անցքերում ուղղաձիգ, իսկ շարքերում՝ հորիզոնական ամրանաձողերի տեղադրմամբ:

Միջնորմները նախատեսված է իրականացնել թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով, դրանք ամրանավորելով անցքերում ուղղաձիգ և շարքերում՝ հորիզոնական ամրանաձողերի տեղադրմամբ:

Տանիքը նախատեսված է իրականացնել մետաղական կրող բարակապատ կոնստրուկցիաներով, որոնց վրա նախատեսվում է տեղադրել պողպատե ցինկապատ պրոֆիլավոր երեսարկ (H60-750-0.7 մակնիշի, ըստ ГОСТ24045-94): Տանիքի որոշ հատվածներ կիրականացվեն հարթ և կլինեն օգտագործվող (8.00 նիշ), իսկ որոշ հատվածներ կունենան փոքր թեքություն (12.40 նիշ):

Ռեստորանային համալիրի 4-րդ մասնաշենքը մեկ հարկանի կառույց է՝ միաձույլ ե/բետոնե ժապավենային հիմքերով: Շենքի կոնստրուկտիվ համակարգի լուծումն ընդունված է որպես շրջանակա-կապային կարկաս: Հարկերի բարձրությունը հատակից հատակ կազմում է 4.2մ :

Հիմքային հեծաններն նախատեսված են 800 մմ բարձրությամբ և 650մմ լայնությամբ: Նախատեսվող միաձույլ ե/բետոնե սյուները քառակուսի են և ունեն 450x450մմ չափերի հատույթ, հեծանները նույնպես քառակուսի են՝ 450x600մմ չափերի հատույթով:

Միաձույլ ե/բ պատերը նախատեսվում է իրականացնել 200 մմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնից (B25 դասի)՝ սյուների և դիաֆրագմանների իրար հետ ամրանավորմամբ և միաժամանակ բետոնացմամբ:

Միաձույլ ե/բետոնե ծածկերը յնունպես կիրականացվեն 200 մմ հաստությունը, B25 դասի ծանր բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով:

Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել ապակեպատ և բազմաշերտ, թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով շարվածքով և ջերմամեկուսացման շերտով, ամրանավորելով դրանք անցքերում ուղղաձիգ, իսկ շարքերում՝ հորիզոնական ամրանաձողերի տեղադրմամբ:

Բոլոր ուղղաձիգ և հորիզոնական ամրանները կխարսխվեն համապատասխան ե/բ սյուների և հեծանների մեջ:

Միջնորմները նախատեսված է իրականացնել թեթև բետոնե փոքրաչափ անցքավոր բլոկներով, իսկ տանիքը՝ հարթ և օգտագործվող:

Համաձայն աշխատանքային նախագծի, մոտեցումը ռեստորանին կիրականացվի հիմնական մուտքից: Ռեստորանի գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 4](#)-ում:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր կհանդիսանա տարածքում նախատեսված կաթսայատունը: Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի ռեստորանային համալիրի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգ:

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇԸ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր ցուցանիշներ		
Հողամասի մակերես	հա	3,704
Կառուցապատման մակերես	մ ²	2515.0 (հողամասի նկատմամբ՝ 6,7%)
Մասնաշենքերի թիվ	հատ	4
Ճանապարհային ծածկույթ և վերգետնյա ավտոկայանատեղի	մ ²	7 482.0
Մայթեր	մ ²	1600.0
Հետիոտնային արահետներ	մ ²	950.0
Կանաչապատման մակերես (ջրանցիկ տարածք)	մ ² (%)	25 055.3 (հողամասի նկատմամբ՝ 67.7%)
Հիմնական սենյակների մակերես		
Ճեմասրահներ և նախամուտքեր	մ ²	1 382.5
Հանդիսությունների դահլիճներ և ռեստորան	մ ²	1 397.1
Խոհանոցային տարածքներ	մ ²	1 066.8
Սանիտարական հանգույցներ	մ ²	178.8
Գրասենյակային տարածքներ	մ ²	275.6
Օժանդակ և տեխնիկական սենյակներ	մ ²	187.7
Պատշգամբներ	մ ²	325.7
Միջանցքներ և աստիճանավանդակներ	մ ²	557.2
Ինժեներական ցանցեր		
Էլեկտրամատակարարում	կվտ	550.0
Զրամատակարարում	լ/վրկ	10,6 (առավելագույն ջրապահանջ)
Կոյուղի	լ/վրկ	10.6 (առավելագույն ելք)
Ջեռուցում		
Կաթսայատան մակերես	մ ²	40
Կաթսաների քանակ	հատ	2 (յուր. 400 000 կկալ/ժ) 4 (յուր. 30 960 կկալ/ժ)

4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական պահանջների համաձայն: Հաշվի են առնված նաև դրանց շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանների բավարարումը, որի նպատակով նախատեսված է 45մ³ ծավալով պահուսատային բաք՝ համապատասխան պոմպերով:

Ռեստորանային համալիրի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Մամիկոնյան փողոցով անցնող քաղաքային ջրագծից: Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու և անձրևաջրերի հեռացման, ինչպես նաև հակահրդեհային սնուցող ցանց:

Անհրաժեշտ ջրապահանջի ու կեղտաջրի ելքի հաշվարկներն իրականացվել են հիմնվելով ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» նորմերի վրա, որի մանրամասները բերված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում:

Տաք և սառը ջրամատակարարման մուտքագծերի համար կկիրառվեն պոլիպրոպիլենային $\Phi=63$ մմ տրամագծերով խողովակներ: Նախատեսված է խողովակների ջերմամեկուսացում ջերմակայուն մեկուսիչ սպունգերով:

Բաժանարար ցանցը մագիստրալային է, իսկ դեպի կաթսայատուն նախատեսված է առանձին $\Phi=63$ մմ առանձին գիծ՝ նախատեսված տաք ջրի համար (տաք ջրի ակումուլացիոն բաքի մուտք): Բաժանարար ցանցի վրա տեղադրված են փականներ, որոնք հնարավորություն կտան վթարների վերացման և վերանորոգման դեպքում անջատել ցանցի համապատասխան հատվածները:

Ռեստորանային համալիրի ներքին սառը և տաք ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել $\Phi=15-50$ մմ տրամագծով պոլիպրոպիլենային խողովակներով: Միացումները սանիտարական սարքերին նախատեսվում է իրականացնել ճկուն խողովակաշարերով:

ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» նորմերի հիման վրա իրականացված հաշվարկների համաձայն անհրաժեշտ առավելագույն ջրապահանջը կազմում է 10,6 լ/վ (միջին ժամային ջրապահանջը՝ 13մ³/ժ):

Կոյուղու համակարգը նույնպես միացված է լինելու գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանցին, որն անցնում է Դավիթ Բեկ փողոցով:

Ռեստորանային համալիրի կոյուղաջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել D=50-100մմ տրամագծով պոլիվինիլքլորիդե խողովակներով: Խոհանոցային հատվածի կոյուղաջրերի մոնտաժումն իրականացվելու է առանձին համակարգով՝ միացվելով նախ յուղորսիչին, ապա հեռացվելով դեպի կոյուղու քաղաքային ցանց:

ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» նորմերի հիման վրա իրականացված հաշվարկների համաձայն կոյուղու առավելագույն ելքը 10,6լ/վ է:

Անձրևաջրերի հեռացումը նախատեսված է իրականացնել անձրևատար կանգնակների միջոցով՝ $D=100-10$ մ տրամագծով խողովակներով, որոնք կմիացվեն քաղաքային անձրևատար համակարգին:

Մուտքի մոտ անձրևաջրերի մեծ ելք չունենալու համար նախագծով նախատեսված է մայթերի եզրաքարի տակ տեղադրել երկայնական ջրահեռացման ընդունիչ համակարգեր, որոնք նախատեսվում է միացնել գործող հեղեղատար կոյուղուն:

Մակերևույթային ջրերի հեռացման համար ընդհանուր տարածքի երկայնական թեքությունը 1.17% է, իսկ լայնական թեքությունները 0.0%:

Հակահրդեհային համակարգն իրականացված է անկախ, որի նպատակով նախատեսված է 45մ^3 ծավալով պահուստային բաք համապատասխան պոմպերով, որոնք հրդեհի դեպքում կարող են ապահովել հրդեհաշիջման պահանջները: Ներքին հակահրդեհային ջրապահանջը կազմում է 2×2.5 լ/վրկ: Հակահրդեհային համակարգում նախատեսված են $D=89 \times 4$, $D=76 \times 3.5$ և $D=57 \times 3.5$ մ տրամագծով խողովակներ: Հակահրդեհային կանգնակները տեղադրվելու են աստճանավանդակներում և միջանցքի համապատասխան հատվածներում՝ ապահովելով դեպի հակահրդեհային ծորակներ ազատ մոտեցում: Յուրաքանչյուր հարկում համապատասխան կանգնակի վրա արկղի մեջ նախատեսվում է տեղադրել հակահրդեհային կցորդ ծորակ փականով և 20մ երկարությամբ ռետինե խողովակ ր կրակմարիչներ:

4.1.3. Գազամատակարարում, ջեռուցում (հովացում) և օդափոխություն

Նոր Նորք Միկոյան փ. 9/3 հասցեում կառուցվող ռեստորանային համալիրի գազամատակարարման, ջեռուցման (հովացման) և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն ՇՈՒՍ 42-1037 (գազամատակարարում), ՇՈՒՍ 2.08.02-89 (հասարակական շենքեր և շինություններ), ՇՈՒՍ Պ.7-62, ՀՀ գործող ՇՆևԿ և պատվիրատուի պահանջների:

Գազամատարարարումը նախատեսվում է իրականացնել նախատեսվող գործունեության տարածքում գոյություն ունեցող գազատարից, որը նախկինում շահագործվել է ռեստորանային նախկին համալիրի (բաղկացած հավաքովի կոնստրուկցիաներից, որոնք ապամոնտաժվել են նախկին սեփականատիրոջ կողմից դեռևս նախագծային-հետախուզական աշխատանքները սկսելուց առաջ) կարիքների համար:

Ռեստորանային համալիրի 1-ին մասնաշենքի տանիքում նախատեսվում է կառուցել 40մ^2 կաթսայատուն: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել

ՉՋ=400000կկալ/ժ ջերմարտադրողությամբ 2 կաթսաներ (յուրաքանչյուրը 500կվՎտ), որոնք նախատեսված են համալիրի ջեռուցման համար և 4 հատ ՉՋ.=30960կկալ/ժ ջերմարտադրողությամբ պատին կախովի կաթսաներ՝ տաք ջրամատակարարման նպատակով:

Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը:

Ջեռուցման ներքին համակարգի համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակաշրջանի համար -19°C է: Ջերմատարը ջուր է: Անհրաժեշտ ջերմության ընդհանուր հաշվարկային ծախսերը կազմում են.

- $Q_{\text{ջ}}=300000\text{կկալ/ժամ}$
- $Q_{\text{օդ}}=240000\text{կկալ/ժամ}$
- $Q_{\text{տ.ջ}}=120000\text{կկալ/ժ} = 660000\text{կկալ/ժ}$:

Ընտրված է երկխողովականի, ջերմատարի փակուղային շարժմամբ ջեռուցման համակարգ: Ջերմատարները երկու կանգնակների միջոցով նախատեսված հորաններով նախատեսվում է իջեցնել ջեռուցվող հարկեր և այնտեղից հորիզոնական շարժմամբ մոտեցվնել ջեռուցման սարքերին:

Որպես ջեռուցման և հովացման սարքեր ընտրված են արտասահմանյան ֆիրմայի արտադրության օդամղիչ կոնվեկտորներ (ֆանկոյլներ) և այլումինե ջեռուցիչներ: Մատակարարող և հետադարձ խողովակները կմոնտաժվեն ջերմամեկուսացված պողպատյա և պոլիպրոպիլային խողովակներով, որոնք նախատեսվում է անցկացնել առաստաղի տակով և մասամբ հատակի միջով:

Բոլոր կաթսաները համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով:

Կաթսայատան գազասպառման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով կտեղադրվի այրվող գազերի ազդանշանային սարք: Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում դեղեկտորը տալիս է լույսաձայնային ազդանշան, որի դեպքում էլ մագնիսական կափույրը դադարեցնում է գազի մատակարարումը դեպի գազասպառման սարք:

Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացքում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում ($C_{\text{NO}_2}=0.04\text{ մգ/մ}^3$, $C_{\text{CO}}=0.007\text{ մգ/մ}^3$):

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի 2 ծխնելույզների միջոցով (յուրաքանչյուրը՝ $d=250\text{մմ}$, $H=10\text{մ}$), որոնք համապատասխանում են СНиП 2.04.05-91 պահանջներին:

Ռեստորանային համալիրի օդափոխությունը նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի: Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն:

Ռեստորանի սրահների օդի ներծծման համար տանիքում նախատեսված են տանիքային ներածման-արտածման սարքեր՝ արտածվող օդի 70% վերաօգտագործմամբ:

Ներածման-արտածման համակարգեր են նախատեսված հանդիսությունների սրահների, տաք արտադրամասի և խոհանոցի համար:

Ներածման համակարգերի միջոցով կատարվում է օդի ներածում սրահներին, տաք արտադրամասին և խոհանոցին, իսկ արտածումը կատարվում է արտածման համակարգերի օգնությամբ:

Նախատեսված է նաև հովացման համակարգ, որն իրականացվում է ֆանկոյլների և չիլլերների օգնությամբ: Էլեկտրաէներգիայի խնայողականության, սառեցման զոնաների սառնամատակարարման ռեժիմը ճիշտ կարգավորելու, ինչպես նաև ռեգերվային և փոխարինող հզորության առկայությունը ապահովելու համար նախատեսված է մինչև 50% հզորության 2 հատ (Q_ս=250կվտ) հզորության չիլլերներ:

Չիլլերները ևս տեղադրվում են 1 մասնաշենքի տանիքի վրա:

4.2 Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Ընդհանուր շինարարական աշխատանքների տևողությունը կազմում է 28 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից, որից 3 ամիսը նախատեսված է Կապալառուի մրցույթի կազմակերպման համար: Հետևապես բուն շինարարական աշխատանքները կլինեն 25 ամիս:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում զոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, համաձայն որի ընդհանուր հողային աշխատանքների ծավալները կազմում են **21938.0** մ³, որից.

- լիցք 10027 մ³
- լիցքային գրունտ 1497 մ³
- ժայռային հանույթ 4896 մ³
- IV կարգի գրունտի հանույթ 3074 մ³
- հողաբուսաշերտ 2444 մ³:

Հողային զանգվածի հիմնական մասը (17685 մ³) ենթակա է վերաօգտագործման: Ոչ պիտանելի հանույթը կազմում է 4253մ³, որը որպես շինարարական աղբ կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրուտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Շինարարական հրապարակը (շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 5](#)-ում) ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես ռեստորանային համալիրի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանագատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ելնելով շինարարության ոչ մեծ տևողությունից հատուկ շինարարական բազայի ստեղծումը նպատակահարմար չէ: Շին. հրապարակում նախատեսվում է տեղադրել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, հանդերձարան, պահակատնակ, ինչպես նաև բիոզուգարաններ և փակ պահեստ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարության ընթացքում ջրահեռացումն ապահովելու նպատակով կկառուցվեն ժամանակավոր առվակներ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շինարարական աղբն է 4253մ³ (ոչ պիտանի հանույթ) ծավալով և կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 2200 կգ:

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել միայն տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնության դեպքում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Երևանի քաղաքապետարանի կողմից տրված տեղեկանքի համաձայն, այն նախատեսվում է տեղափոխել Նուբարաշենի խճուղուն հարող քաղաքային աղբավայր (տես՝ [հավելված 6](#)):

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

4.2.1. Բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 3000 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 3000 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 44 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 3000 \times 2 \times 0.0015 \times 44 = 396 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times x + n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների թվաքանակ, 3 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 616 օր

n1- բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 26 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 26 \times 0.025) \times 550 = 430 \text{ մ}^3$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 396 \text{ մ}^3 + 430 \text{ մ}^3 = 826 \text{ մ}^3$$

Շինարարության ընթացքում անհրաժեշտ տեխնիկական միջոցների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1.	Ավտովերամբարձ կռունկ	KC-65713-1	1
2.	Բեռնամղիչ պոմպ	СБ-126	1
3.	Ինքնաթափ ավտոմոբիլ	MA3 5550	3
4.	Էլ. եռակցման սարք	СТН 500	2
5.	Շարժական կոմպրեսոր	ЗИФ 55-В	1
6.	Էքսկավատոր Hyundai	170W-7	1
7.	Բուլդոզեր KOMATSU	D37-EX-22	1

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 29 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ:
- արհեստագործներ և բանվորներ՝ 20 մարդ,
- մեքենավարեր և օգնականներ՝ 6 մարդ:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքում, որը տեղակայված է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 900-1250մ բարձրության վրա:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 02.05.2007թ. N 2164833 վկայականի պատկանում է «Վելլի Բեյ» ՍՊԸ-ին:

Տարածքն ունի արևոտ, չոր, ցամաքային կլիմա: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 8.8°C - 11.6°C է, միջին տարեկան տատանումները՝ 31°C : Ամառը տևական է, բնութագրական են շոգ, չոր եղանակները: Օդի ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին լինում է $+22^{\circ}\text{C}$ -ից $+26^{\circ}\text{C}$, իսկ առավելագույնը՝ $+41.4^{\circ}\text{C}$: Ամռանը զարգանում են լեռնահովտային քամիները, որոնց առավելագույն արագությունը դիտվում է օրվա երկրորդ կեսին, երբեմն հասնելով մինչև 15-20մ/վրկ: Ձմեռը չափավոր ցուրտ է, հաստատուն ձնածածկույթ առաջանում է ոչ ամեն տարի: Հունվարի միջին ջերմաստիճանը -4°C -ից -6°C է, նվազագույնը՝ -31°C : Գրունտի սառեցման խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ II-7-2011 նորմերի, կազմում է 0.6մ:

Ձմռանը գերակշռում են թույլ քամիները: Գարունը կարճատև է՝ եղանակների մեծ փոփոխությամբ: Աշունը մեղմ է ու հաճելի, արևոտ, տաք, անհողմ եղանակով: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 250-370մմ, առավելագույնը դիտվում է մայիս ամսին:

Նախատեսվող գործունեության ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1336.8 -1362.4 մետրերի սահմաններում:

Էկոզոեն երկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափությունը և այլն, բացակայում են:

Ռեստորանային համալիրի մասնաշենքերի հիմքերի համար որպես հիմնատակ ծառայում են 4-րդ և 5-րդ կարգի շերտի գրունտները.

- 4-րդ կարգ (մանրաբեկորային, խճի և խճավազի պարունակությամբ, կավավազային լցոնով մինչև 20-35%, բեկորները բազալտային կազմի, բաց շագանակագույն լցոնով, թույլ խոնավ և պինդ թանձրության), որն ունի հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները.

- հաշվարկային դիմադրողականություն՝ $R_0=400$ ԿՊա,
- հարթակի գործակից՝ 800 կգ/սմ³:
- շերտի հզորությունը 8.6մ ավելի, լայն տարածմամբ:

- 5-րդ կարգ (մոխրագույն բազալտներ, թույլ ծակոտկոն, տեղ-տեղ խոռոչավոր և խարամված, բեկորային անջատումներով), որն ունի հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները.

- խտություն՝ 2.7 տ/մ³,
- միաառանցք սեղմման դիմադրողականություն՝ $R_0=800$ ԿՊա,

- հարթակի գործակից՝ 800 կգ/սմ³:
- շերտի հզորությունը 9.3 մ ավելի, լայն տարածմամբ:

Համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի աղյուսակ 2-ի՝ գրունտի կարգը երկրորդ է, իսկ ըստ շահագործման դժվարության (ՇՆևԿ IV-5-82) համապատասխանաբար V և VII կարգերի:

Ինժեներատեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար:

5.1 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում՝ $A_{max}= 0.4g$ արագացման առավելագույն մեծությամբ:

5.2 Բուսական և կենդանական աշխարհ

Ծրագրի իրականացման տարածքը տեղակայված է ք. Երևանի Նոր Նորք վարչական շրջանում: Տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում: Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Միկոյան 9/3 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 02.05.2007թ. N 2164833 վկայականի պատկանում է «Վելլի Բեյ» ՍՊԸ-ին:

Տվյալ տեղանքը բնութագրվում է տարածքի համար բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով, որտեղ չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ տեղահանվող հողաբուսաշերտը (մոտ 2444 մ³), նախատեսվում է կուտակել՝ հետագայում տարածքի բարեկարգման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով:

5.3 Պատմամշակութային հուշարձաններ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում գտնվող հողատարածքի սահմաններում, որին հարակից/ազդակիր տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները:

Կառուցապատվող տարածքին համեմատաբար մոտ գտնվում է Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցին, որը կառուցվել է ընդամենը 1998թ. և պատմամշակութային տեսանկյունից արժեք չի ներկայացնում: Տվյալ եկեղեցու հեռավորությունը կառուցապատման ենթակա տարածքից կազմում է ավելի քան 125մ, որտեղից

եկեղեցին անգամ տեսանելի չէ՝ պայմանավորված նրանց միջև առկա բարձր բլուրի առկայությամբ: Կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության պատճառով եկեղեցու տարածքը որևէ բացասական ազդեցություն կրել չի կարող:

5.4 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախատեսվող գործունեության տարածքը հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցմամբ (վկայականով N 2164833, տրված՝ 02.05.2007թ.) «Վելլի Բեյ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածք (3,704 հա), որի համար առկա է Երևանի քաղաքապետի կողմից 12.03.2019թ. տրված N 01/18-07/2-11950-129 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում):

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին տվյալ տարածքի բարարեկարգման և կանաչապատման վերաբերյալ (դենդրոնախագիծ): Ռեստորանային համալիրի տարածքի դենդրոնախագիծը (ծառաթփատեսակային բուսականության կազմով) համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ (մանրամասները տես՝ նախագծային փաստաթղթեր, կանաչապատման նախագիծ), համաձայն որի տարածքի շուրջ 67,7%-ը նախատեսվում է կանաչապատել սիզամարգերով և տարբեր տիպի մշակաբույսերով (կանաչապատման սխեման բերված է [հավելված 7](#)-ում):

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ տեղահանվող **հողաբուսաշերտը (2444 մ³)** նունպես նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի կույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառեն էրոզիոն պրոցեսները: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են 2-3 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտի պահման համար օգտագործվող տարածքը կարող է լինել ինչպես շին հրապարակի տարածքում, այնպես էլ նրանից դուրս: Պետք է ապահովվի, որպեսզի տվյալ տարածքը/տեղամասը լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

Անհրաժեշտ քանակության հողաբուսաշերտի օգտագործումից հետո նախատեսում է պահուստում մնացած քանակությունը չափագրել և այն հանձնել Պատվիրատուին կամ համայնքին՝ Պատվիրատուի և Շահառուի գրավոր համաձայնությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է իրականացնել մակերեսային ոռոգում:

5.5 Օդային ավազան

Երևան քաղաքում օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՇՄՄՏԿ ՊՈԱԿ) կողմից:

Համաձայն [ՇՄՆՄԿ-ի 2018թ.-ի տարեկան հաշվետվության](#), ուսումնասիրվող տարածքին ամենամոտ օդային ավազանի գետնամերձ շերտի մշտադիտարկումների ստացիոնար դիտակետում՝ դիտ. 8, որտեղ կատարվում են ինչպես ակտիվ, այնպես էլ ստացիոնար դիտարկումներ, օդային աղտոտիչների (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդներ ածխածնի մոնօքսիդ և գետնամերձ օզոն) միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

5.6 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքն աղքատ է գրունտային ջրերով: Գրունտային ջրերը գտնվում են 70.0 մետրից ցածր հորիզոններում:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ *Օդի աղտոտում*

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէրոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 2 ամիս կամ

2 ամիս x 22 օր x 8 ժամ = 352 ժամ/շինարարություն:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=21938 \text{ մ}^3 : 352 = 62,32 \text{ մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $62,32 \text{ մ}^3 / \text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 105,9 \text{ տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0,6 \times 105,9 \times 10^6 / 3600 = 0,84 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.83\text{գ/վ} \times 352\text{ժ}/2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 1.06 \text{ տ/շին.ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով

շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.2 միջոցառումներ/ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը ռեստորանային համալիրի հարակից տարածքում, հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր, բիզնեսի կետեր) հեռավորությունը շինտարածքից (մոտ 60-200մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

▪ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա ռեստորանային համալիրի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու

տեղադրումը կիրականացվի շին. թույլտվությանը սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են դրական ազդեցություններ՝ կապված տվյալ տարածքի հետագա պահպանություն և կայուն օգտագործում հետ, ինչը հնարավորություն կտա Նոր Նորք համայնքի և Երևան քաղաքի բնակիչներին իրենց ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է [հավելված 8](#)-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցության և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ (հավելված 9), որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների ծախսերի գումարային գնահատումը կազմում է շուրջ **23 մլն**. ՀՀ դրամ, որը կազմում է գործունեության ընդհանուր նախահաշվի արժեքի մոտ 1,2%-ը:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե ազդակիրների կողմից արձանագրվեն համապատասխան բնույթի գանգատներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքի Միկոյան 9/3 հասցեում նախատեսված ռեստորանային համալիրի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:

Հանդիպումը տեղի է ունեցել ս.թ. փետրվարի 19-ին, ժամը 11:00 Երևան քաղաքի Դավիթ Բեկի 286/6 հասցեում, որին մասնակցել են նախագծային ընկերության,

Պատվիրատու ընկերության ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչներ (ընդամենը՝ 19 մարդ): Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցուցակը բերված են [հավելված 13](#)-ում:

Նկար 1. Հանրային քննարկում, 19.02.2020



Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ. փետրվարի 8-ի համարում:

Նկար 2. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 08.02.2020



Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը և բնապահպանական կառավարման պլանը նախապես տրամադրվել են նաև Երևանի քաղաքապետարանի համապատասխան բաժնին:


Հանրային քննարկման ժամանակ իրականացված տեսաձայնագրությունը ներկայացվում է սույն նախնական գնահատման հայտին կից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- <http://www.mnp.am/uploads/1/1553848604Annual-18.pdf>

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

581403



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «26» Սեպտեմբերի 2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատչանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)
«ՎԵԼԻ ԲԵՅ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Երևան, Նոր-Նորք միկոյան փողոց 9/3

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀՀ Կառավարությանն առընթ. պետ.ունեցվածքների հաշվառման և սպասարկման վարչության 03.04.1995 թիվ 550 սեփականաշնորհման պայմ., Երևանի գործկոմի 22.12.1995թ.թիվ 48/15, Երևանի քաղաքապետի 30.10.2006թ. հ. 1752-Ս որոշում, ճարտարապետահատակագծային առաջադրանք 05.04.20122. հ. 01/18-07/2-11348-237, 20.07.2012թ. N 01/18-07/2-33342-679, շինարարության թույլտվություն 31.08.2012թ. N01/18-40917-832, ճարտարապետաշինարարական նախագիծ 03.05.2012թ. հ. 01/18-05/2-19607-337 շինարարության շահագուման փաստագրման ակտ 04.09.2013թ. հ. 01/19-13/51372-470

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՆԻԹԱԳՐԵՐԸ
Կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0103-0126
Մակերեսի չափը (հա)՝ 3.704

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 26092013-01-0149 Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՆԻԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/ի	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-008-0103-0126-001-000	սպասարկման սրահ	660.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-008-0103-0126-002	օժանդակ շինություն	310.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-008-0103-0126-003	Էլ. ենթակայան	51.3 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-008-0103-0126-004	պահակակետ	7.2 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-008-0103-0126-001	ծածկ	125.3 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-008-0103-0126-003	պարիսպ	21.81 ք.մ., 32.72 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-008-0103-0126-002	ծածկ	102.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005թ. N199-Ն ՀՀ օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:
Սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է «24» Սեպտեմբերի 2013 թվականին:
Սույն վկայականը հանդիսանում է N 24092013-01-0001 վկայականի ուղղված օրինակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գայանե Դեմիրյան
Գրանցումը կատարող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Երևան SU անշարժ գույքի ռեգիստր
ՎՎ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը հրամանադրող սպասարկման գրասենյակի

Վկայական N 26092013-01-0149 Էջ 2

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ձև N1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳՐԱՆ ԹՈՒՅԼՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)
N 01/18-07/2-11950-129 «18.03» 2019թ.

Table with 2 columns: Question (e.g., 1. Հողամասը գտնվում է...), Answer (e.g., 1. Թողանակ ուրբը քաղաքացիական միջավայրում...)

Table with 2 columns: Question (e.g., 10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների...), Answer (e.g., Քանոնական ներակա 650.34 ք.մ. ընդհանուր մակերեսով ռեսուրս...)


Երևանի քաղաքապետ՝ Հ. ՄԱՐԴՈՒՅԱՆ
ստորագրությունը
4, 8.

Կատարող՝ Գ. Բաղդասյան


ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱԳԾՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 45/28003

« 17 » 03 2020թ.

«ՎԵԼԼԻ ԲԵՅ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՄԻՆԱՍՅԱՆԻՆ


Ի պատասխան Ձեր 12.03.2020 թվականի /20/28003/ գրության տեղեկացնում եմ, որ շինարարական աղբը հնարավոր է տեղափոխել Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղուն հարող քաղաքային աղբավայր:


ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՄՈՒՆԱԼ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԿԱՐՈՅԱՆ

Կատ. Վ. Առուշանյան
հեռ. 011514176

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՏԱՐԱԾՔԻ ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ (հաստատված)





ԲԱՅԱՏՐԱԳԻՐ
կամաչապատման առաջարկ

Հ/Հ	Պայմանական նշաններ	Հողատարածքի նշանակություն	Տեղանկյութի տեսակամի	Տեղանման մասնա	Քանակ
1		Սիզամարգ	Ուսյուրաս	6570քմ	400 կգ
2		Նիմ	Բնական ճրմ	2171քմ	---
3		Չեկորատիվ և ծաղկող բոխեր	Ֆորսիցիա, վայրի խաղող (կուսախաղող) խնմտեղես, սիբիական հիբիսկոս, ճապկի	0,3x1,0մ (1,56 հա)	20 000 հատ
4		Վերատնկման ենթակա գոտիքոն ժմեցող եղևիմեր	Մշտաղալար	---	6 հատ
5		Վերատնկվող եղևիմեր	Մշտաղալար	4 x 4	6 հատ
6		Մաղկանց	Պեաուցա, բալչաժաղիկ, խորբնի, սպվիա, բեզույա	1քմ-30հատ (163քմ)	4900 հատ
7		Գոյոքոն ժմեցող տնկիմեր	Պտղատու և դեկորատիվ ծառեր	---	---

ՀԱՄԱՁԱՅՆՆԵՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԱԶՊՈՒՅՏՄԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ԳԼԽ. ՄԱՆԱԳԵՏ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախատեսվող գործունեության արժեքի մոտ 1,2%
Ն Ա Ն Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ				
1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	<p>1.1. Ռեստորանային համալիրի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ս.թ. փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին Երևանում (հասցե՝ Դավիթ Բեկի 286/6): Հանրային քննարկման հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի փետրվարի 8-ի համարում;</p> <p>1.2. Հանրային լսումներում ներկայացվել են նաև Բողոքների արձագանքման մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի Պատվիրատուի կողմից:</p>	«Վելի Բեյ» ՍՊԸ, «Մովարթստուդիո» ՍՊԸ	
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ ռեստորանի շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	«Վելի Բեյ» ՍՊԸ	
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ց Ա Ն Փ ՈՒ Լ				
Առողջություն և աշխատանքային անվտանգություն				
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և ռեստորանի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	<p>3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը</p>	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու	

		<p>և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանական միջոցներով:</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում				
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ ազդակիրները կտեղեկացվեն ԲԱՄ-ի մասին, համաձայն որի նրդրման.</p> <p>Ա: Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>Բ: Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան (բողոքի գրանցման ձևը՝ տես Հավելված 10-ում) և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>«Վելլի Բեյ» ՍՊԸ Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Շրջակա միջավայրի պահպանություն				
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> Ռեստորանի հարակից տարածքում առկա մասնավոր բնակելի տների, փոքր բիզնեսի կետերի և այլ հանրային կառույցների վրա գնահատվում են. 	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ</p>	<p>Կապալառու</p> <p>«Վելլի Բեյ» ՍՊԸ</p>	

<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Կառուցապատման հարակից տարածքներում առկա հանրային ծառերի վրա ազդեցություն: • Նախատեսվող գործունեության տարածքում առկա հողաբուսաշերտի վրա ազդեցություն: 	<p>անհրաժեշտության՝ ազդակալիք անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափազորումներ կիրականացվեն ըստ անհաժեշտության՝ ազդակիր անձանց կողմից բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p>5.3. Բուսականության պահպանության կառավարում</p> <p>5.3.1. Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պաստառներ, ջրցանում) և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>5.4. Հողաբուսաշերտի պահեստավորման և պահպանության կառավարում</p> <p>5.4.1. Շինաշխատանքների ընթացքում տարածքում առկա հողաբուսաշերտի վրա ազդեցությունների (շինթափոնների և կեղտաջրերի տարածում) հնարավորինս բացառում:</p> <p>5.4.2. Ազդեցության ենթակա հողաբուսաշերտի ժամանակավորապես պահեստավորում դրա համար նախատեսված առանձնացված վայրերում</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>«Վելլի Բեյ» ՍՊԸ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
--	---	--	--

		(բուսականությունից և ցանկացած շին. թափոններից զերծ տարածք, որտեղ բացառվում են էրոզիոն ցանկացած պրոցեսները)՝ հետագայում բարեկարգման աշխատանքներում օգտագործելու նպատակով:		
		5.4.3. Հողաբուսաշերտի պահեստավորում 2-3 մ բարձրությամբ կույտերի տեսքով կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:		
Շինարարական հրապարակի կազմակերպում				
6. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի կազմակերպումից ազդեցություններ	ոչ ճիշտ բխող	6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում: 6.2. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, Հողաբուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: 6.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում: 6.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ:	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու
Երթևեկության կառավարում				
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.		7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով: 7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը: 7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համաև նվազագույն խոչընդոտներով: 7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք	Կապալառու Կապալառու Կապալառու Կապալառու

	ճանապարհներին վնաս	<p>կարող են ճանապարհների խցանումների պատճառով;</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Արտակարգ իրավիճակների կառավարում				
8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	<p>8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p> <p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:</p> <p>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը;</p> <p>8.6. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն (<u>Հավելված 12</u>):</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Թափոնների և նյութերի կառավարում				
9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն	9.1. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;	Կապալառու	

	<p>նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>9.2. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>9.3. Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</p> <p>9.4. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
		<p>9.5. Կենցաղային աղբի հավաքումը և պարբերաբար հեռացումը անհրաժեշտ է իրականացնել թույլատրված աղբավայրում:</p> <p>9.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին.աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Աշխատողների վերապատրաստում				
<p>10. Աշխատողների վերապատրաստում</p>	<p>Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:</p>	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողկարգի մասին;</p>	<p>«Վելլի Բեյ» ՍՊԸ Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
Աշխատանքային տեղամասի վերականգնում և բարեկարգում				
<p>11. Շինհրապարակի Վերականգնում և ռեստորանի տարածքի բարեկարգում</p>	<p>Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը, թափոնները և այլն:</p>	<p>11.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>11.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>11.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>11.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	
ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ				
<p>12. Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>12.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճառ իրականացումը:</p>	<p>Կապալառու</p>	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխան ատուներ	Մոնիտորինգի հաճախակա- նություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լուսմներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունն ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր - տեղամասեր, - հանրային լուսմներ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված և տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը		քանակն ու կարևորությունը		
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	
6. Շինհրապարակի վերականգնում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	ռեստորանի տարածքի սահմաններում	Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից	Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին	«Վելլի Բեյ» ՍՊԸ, Կապալառու	

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (բնակիչ, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված Պատվիրատուին/ չլուծված)

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՅՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ ՁԵՎ

Մեղմացնող միջոցառումների և ստուգայցի մոնիտորինգի մասին հաշվետվություն N

Նախագիծ՝ _____

Ստուգման տեղամաս՝ _____

Կապալառու՝ _____

Եղանակային պայմանները ստուգայցի պահին՝ _____

Ստուգայցն իրականացրել է: Անուն/ ազգանուն/ պաշտոն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Մոնիտորինգի ստուգայցն իրականացվել է Կապալառուի ներկայացուցչի մասնակցությամբ: Անուն/ ազգանուն/ պաշտոն

<i>Նախագծման փուլ</i>						
Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է (Այո/ Ոչ/ Ոչ)	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ (ՈւԳՊ) այդ թվում վերջնաժամկետ	Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ պահավող միջոցառումներ)
Նախնական գնահատման հայտ (ՆԳՀ)		Բնապահպանական փորձաքննության եզրակացությունն առկա է		Վելի Բեյ		
Շին աղբի և թափոնների տեղադրման վայր		Թափոնների և շինարարական աղբի տեղադրման թույլտվությունն առկա է		Վելի Բեյ		
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
Շին հրապարակ: ընդհանուր պահանջներ						
Բնապահպանական կառավարում. բնապահպանական թիմ, առողջություն և աշխատանքի անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, բողոքների արձագանքման մեխանիզմ						

Շինարարական գործողություն		Մեղմացնող միջոցառում (ըստ ՆԳՀ/ ԲԿՊ)	Մեղմացման միջոցառում իրականացված է (Այո/ Ոչ/ Ոչ)	Պատասխանատու	Ուղղիչ գործողության պահանջ ՈւԳՊ այդ թվում վերջնաժամկետ	Նախորդ ՈւԳՊ կարգավիճակը (ուղղված է/ այլ միջոցառումներ են պահանջվում)
Բնապահպանական պատասխանատուներ						
Բոլոր գործողությունները	1.	Բնապահպանական/ առողջության և աշխատանքի անվտանգության պատասխանատուն նշանակված է և ներկա է շին հրապարակում:				
Կառավարման միջոցառումներ						
Բոլոր գործողությունները	2.	կառուցապատման սահմաններից դուրս այլ տարածքների օգտագործումը բացառված է				
Առողջություն և աշխատանքի անվտանգություն						
Բոլոր գործողությունները	3.	Նախագուշացնող նշաններն ու տարածքի ցանկապատումն ապահովված				
Հողային աշխատանքներ	4.	Բաց հորերի հետլիցքն իրականացված է կարճ ժամկետներում:				
Բոլոր գործողությունները	5.	Կողմակի անձանց մուտքը շին հրապարակ հուսակլի արգելափակված է				
Բոլոր գործողությունները	6.	Աշխատակիցներն ապահովված են արտահագուստով (և կրում են դրանք), իսկ ըստ անհրաժեշտության նաև ԱՊՄ-ով				
Բոլոր գործողությունները	7.	Կառուցապատումն ու տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների մասին տեղեկատվական ցուցանակը տեղադրված է:				
Բոլոր գործողությունները	8.	Աշխատողներն ապահովված են անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններով. խմելու և կենցաղային կարիքների ջուր, ընդմիջման և հանգստի հարմարություններ, գուգարան և այլն:				
Բոլոր գործողությունները	9.	Առաջին բուժօգնության միջոցներն առկա են և հասանելի բոլոր աշխատողների համար:				
Բոլոր գործողությունները	10.	Կրակմարիչն առկա է, գտնվում է սարքին վիճակում և աշխատողների համար հասանելի վայրերում:				
Արտակարգ իրավիճակների պլան						
Բոլոր գործողությունները	11.	Արտակարգ իրավիճակների պատասխանատու անձը ներկա է շին հրապարակում:				
Բոլոր գործողությունները	12.	Արտակարգ իրավիճակների պատասխանատու կոնտակտային տվյալներով առկա է, թարմացված է և փակցված է տեսանելի				

		վայրում				
Բոլոր գործողությունները	13.	Պատահարների մասին հաշվետվություն վարվում է:				
<i>Բնապահպանական/ աշխատանքի անվտանգության դասընթացներ</i>						
Բոլոր գործողությունները	14.	Աշխատողներն ուսուցանված են ՆԳՀ/ ԲԿՊ-րի մասին աշխատանքը սկսելուց առաջ:				
Բոլոր գործողությունները	15.	Աշխատողներն ուսուցանված են արտակարգ իրավիճակներին արձագանքելու ընթացակարգերի մասին աշխատանքը սկսելուց առաջ:				
Բոլոր գործողությունները	16.	Աշխատողները ստացել են աշխատանքի անվտանգության հրահանգավորումը աշխատանքը սկսելուց առաջ և գրանցամատյանում առկա են դա փաստող գրառումները:				
<i>Շին հրապարակի մաքրություն</i>						
Բոլոր գործողությունները	17.	Շին հրապարակը և մոտեցնող հասարակական ճանապարհները պահվում է մաքուր վիճակում և զերծ է շին և կենցաղային աղբից				
Բոլոր գործողությունները	18.	Տեղադրված են աղբամաններ կենցաղային աղբի հավաքման համար				
<i>Կապր հանրության հետ և բողոքների արձագանքման մեխանիզմ՝ բնապահպանական հարցեր</i>						
Բոլոր գործողությունները	19.	Տեղի են ունեցել շին աշխատանքների, բնապահպանական ազդեցությունների և մեղմացնող միջոցառումների մասին հանդիպումներ ազդակիր անձանց հետ:				
Բոլոր գործողությունները	20.	Բողոքների գրանցամատյանը առկա է շին հրապարակում և վարվում է: Նախորդ ստուգայցի ժամանակ նկատված բողոքները լուծված են:				
<i>Բնապահպանական պարամետրեր. Փոշու հսկողություն</i>						
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին աղբի հեռացում	21.	Բեռնատարներն փոխադրումներն իրականացնում են փակ ծածկով:				
	22.	Շին հրապարակը պարբերաբար ջրցանվում է:				
	23.	Սարքավորումներն ու մեքենաներն ապահովված են արտանետվող գազերի կլանիչներով:				
<i>Աղմուկի մակարդակի հսկողություն</i>						
Շին տեխնիկայի	24.	աղմուկի մակարդակը գտնվում է մոտակա				

աշխատանքներ		ընկալիչների համար ընդունելի սահմաններում				
	25.	Սարքավորումներն ապահովված են սարքին խլացուցիչներով				
	26.	Աղմակահույց աշխատանքներն իրականացվում են օրվա ցերեկային ժամերին				
<i>Թրթռումների մակարդակի հսկողություն</i>						
Շին տեխնիկայի աշխատանքներ	27.	Թրթռումների ուժգնությունն ու ժամանակահատվածը հսկվում են				
<i>Կեղտաջրերի հսկողություն</i>						
Հեղուկ նյութերի օգտագործման աշխատանքներ	28.	Արտահոսքերը կառավարվում են պատշաճ ձևով				
Հողային աշխատանքներ, նյութերի մատակարարում, առաջացած շին. աղբի հեռացում	29.	Ջրահեռացման համակարգերը և ջրային այլ ուղիները խցափակված չեն նստվածքներով և պաշտպանված են				
Մեքենաների գործածությամբ աշխատանքներ	30.	Բեռնատարների անիվները մաքրվում են մինչև շին հրապարակի լքելը և հասարակական ճանապարհներ մուտք գործելը				
Հողային աշխատանքներ	31.	Հողային հանույթը հեռացված է շինհրապարակից կամ կանոնավոր կուտակված է դրա համար հատկացված կուտակման վայրում				
<i>Շինարարական աղբի և թափոնների կառավարում</i>						
Շին աղբի հեռացում	32.	Շին աղբը և թափոնները տեղադրված են սահմանված վայրում				
Հողային աշխատանքների իրականացում	33.	Անվտանգ թափոնները (հողային հանույթը, քարերը, բետոնե և մետաղական մասերը, այլ) կառավարվում են ԲԿՊ համապատասխան				
Վառելիքի, քսանյութերի, յուղի օգտագործմամբ գործողություններ	34.	Հեղուկ թափոններն ու արտահոսքերը, աղտոտված հողը կառավարվում են ԲԿՊ համապատասխան				
<i>Տարածքի վերականգնում</i>						
Բոլոր գործողությունները	35.	Տարածքը մաքրված է բոլոր թափոններից և շինարարական աղբից				
Բոլոր գործողությունները	36.	Տարածքից հեռացված են բոլոր տեխնիկական միջոցները, ապամոն-տաժված ժամանակավոր օժանդակ կառույցները				
Բոլոր գործողությունները	37.	Հարակից հասարակական ճանապարհները վերականգնված և մաքրված են				

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Պատահարի ամիս/ ամսաթիվ	Պատահարի նկարագրություն	Պատահարի վերացման միջոցառումներ	Միջոցառումների ժամկետներ և պատասխանատու	Պատահարի վերացման կարգավիճակ

**ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

Արձանագրություն

Երևան քաղաքի Միկոյան 9/3 հասցեում ռեստորանային համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների

ք. Երևան

19.02.2020թ.

2020թ. փետրվարի 19-ին ժ.11:00-ին Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում՝ Դավիթ Բեկի 286/6 հասցեում, տեղի ունեցավ ք.Երևանի Միկոյան 9/3 հասցեում նախատեսված ռեստորանային համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ հանրային քննարկումը:

Հանրային քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության, նախաձեռնող («Վելլի Բեյ» ՍՊԸ) և նախագծման խորհրդատու ընկերությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բնակիչներ (ընդհանուր 19 մարդ):

Նախագծի ներկայացում և քննարկում

Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գորիկ Ավետիսյանը բացեց հանդիպումը, ողջունեց քննարկման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ «Վելլի Բեյ» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ մշակվել է «Երևան քաղաքի Միկոյան 9/3 հասցեում ռեստորանային համալիրի կառուցման նախագիծ», որը համաձայն ՀՀ օրենսդրության ենթակա է բնապահպանական փորձաքննության, քանի որ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Այս հանրային քննարկման հիմնական նպատակը վերջինիս ներկայացումն է շահառու հանրությանը և նրանց արձագանքի ստացումը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ:

Նախագծի գլխավոր ճարտարագետ Ա. Մանուկյանը ներկայացրեց նախագծի մանրամասները՝ համապատասխան գծագրերով, քարտեզներով և նկարներով: Նրա կողմից մանրամասն ներկայացվեց գործունեության իրականացման տարածքը և ռեստորանային համալիրի մասնաշենքերի ճարտարապետական լուծումները՝ համապատասխան կոնստրուկտորական լուծումներով և առանձնահատկություններով:

Բնապահպան Բ. Սահակյանը ներկայացրեց մանրամասներ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների ուսումնասիրությունների վերաբերյալ: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Բնապահպանի կողմից մանրամասն ներկայացվեց, թե ինչու է նախատեսվող գործունեությունը ենթակա բնապահպանական փորձաքննության: Նա ներկայացրեց մշակված բնապահպանական կառավարման պլանը, որն ամփոփում է հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները, որոնք ներառում են նաև հնարավոր բողոքների արձագանքմանն ու լուծմանն ուղղված միջոցառումներ:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն լադաֆտի, բուսական և կենդանական աշխարհի վրա, քանի որ գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի զարգացած քաղաքային միջավայրում, որն ուրբանացված տարածք է: Նա պարզաբանեց, որ նախատեսվող աշխատանքների իրականացմամբ կստեղծվեն պայմաններ տվյալ տարածքի հետագա պահպանություն և կայուն օգտագործման համար, ինչը հնարավորություն կտա Նոր Նորք համայնքի և Երևան քաղաքի բնակիչներին իրենց ժամանցն անցկացնել առավել բարեկարգ և հաճելի միջավայրում:

Մասնակիցների կողմից վեր բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Գորիկ Ավետիսյան (Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն) - Արդյոք տվյալ ռետորանային համալիրի համար հնարավոր չէր նախատեսել ստորգետնյա կայանատեղի, որի վրա կստեղծվեր կանաչապատ մակերես:

Պատասխան 2 Վ. Մովսիսյան (նախագծման խորհրդատու կազմակերպություն) – Ինչպես երևում է գլխավոր հատակագծից, նախագծային աշխատանքների իրականացման արդյունքում բավականին մեծ կանաչ տարածք է ստացվել՝ 67,7%: Նախագծային փուլում ստորգետնյա կայանատեղի ժամանակին ուզեցել ենք նախատեսել, սակայն հրաժարվել ենք, քանի որ դա կապված էր մի շարք հարցերի հետ: Նախ այն, որ տվյալ տարածքում առկա են բավականին կայուն գրունտներ՝ հիմնականում բազալտե, որոնց քանդումը մի կողմից կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ, իսկ մյուս կողմից նաև այն հանգամանքի, որ պայթեցման աշխատանքներ իրականացնելու անհարժեշտություն կարող էր առաջանալ: Ուրբանիզացված նման տարածքի համար այսպիսի մոտեցումը

ցանկալի չէր, քանի որ հարց էր առաջանում նման մոտեցման դեպում բնապահպանական առումով կունենաինք դրական, թե բացասական արդյունք:

Բնապահպան Քրիստինե Սահակյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում գրունտները V-VII կարգի են և նախագծային լուծումներում ընտրվել է ամենաօպտիմալ տարբերակը:

Հարց 2. Գորիկ Ավետիսյան (Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն) - Կանաչապատման աշխատանքների համար պետք է լինի կանաչապատման նախագիծ, որը պետք է համաձայնեցվի քաղաքապետարանի համապատասխան վարչության հետ: Ուզում էի հասկանալ ինչու է տարբերվում գլխավոր հատակագծում բերված ռեստորանային համալիրի կողքի կանաչ տարածքը ներքևի մասում նախատեսված կանաչ տարածքից:

Պատասխան 2 Ա. Մանուկյան (նախագծման խորհրդատու կազմակերպություն) - Տարբերությունը կայանում է նրանում, որ մի մասում մշակաբույսեր են, իսկ մյուս մասում սիզամարգ: Տարածքի բարեկագրման և կանաչապատման մանրամասները բերված են նախագծային փաստաթղթերում:

Քրիստինե Սահակյանը հավելեց, որ նախ և առաջ բնապահպանական հիմնական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, ուստի այսօրվա քննարկման թիրախը հիմնականում կառուցապատման ժամանակ առաջացող բացասական ազդեցություններին վերաբերող հարցերն են, իսկ կանաչապատումը ընթացիկ փուլային գործընթաց է:

Հարց 3. Գորիկ Ավետիսյան (Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն) - Ինչքան ժամանակ է նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման համար:

Պատասխան 3. Վ. Մովսիսյան (նախագծման խորհրդատու կազմակերպություն) - Շինարարական աշխատանքները նախատեսված են մոտ 3 տարի, իսկ ավելի կոնկրետ՝ 28 ամիս:

Հարց 4. Գորիկ Ավետիսյան (Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն) – Ինչ է արվել կանաչ տարածքների պահպանման և ոռոգման համար:

Պատասխան 4. Ա. Մանուկյան (նախագծման խորհրդատու կազմակերպություն) - Տարածքում առկա է ոռոգման ջրագիծ, ինչպես նաև ոռոգման ցանց, որոնք կապահովեն կանաչապատ տարածքի հետագա պահպանումը:

Գորիկ Ավետիսյանը հավելեց, որ Երևանի քաղաքապետարանը այս տարի նախատեսում է Միկոյան փողոցում կառուցել նոր խորքային հոր, ուստի

նախատեսվող գործունեության տարածքը հնարավորություն կունենա օգտվել նաև դրանից:

Հարց 5. Էդգար Ավետիսյան (ուսանող, տարածքի բնակիչ) – ներկայումս տվյալ տարածքում շատ են թափառող շները, որոնք անհանգստացնում են տարածքի բնակիչներին: Մյուս կողմից նախկինում հարակից տարածքներում իրականացված շինարարությունների ժամանակ՝ մասնավորապես եկեղեցու շինարարության ժամանակ եղել է սողունների հոսք դեպի բնակելի շենքերի տարածքներ: Հարկ եղած դեպքում ինչպես են նման հարցերը կարգավորվելու:

Պատասխան 5. Ք. Սահակյան - Նշեմ, որ եկեղեցու տարածքը գտնվում է բնակելի շենքերին բավականին մոտ, ի տարբերության նախատեսվող գործունեության տարածքի: Կառուցապատման ենթակա տարածքը նիշերով բավականին ցածր դիրքում է, քան եկեղեցին և բավականին հեռու նրանից: Նշված տարածքները նրանք միմյանցից տարանջատված են նաև մեծ բլրաթմբով, ինչի արդյունքում նախատեսվող գործունեության տարածքից եկեղեցին ընդհանրապես չի երևում:

Պետք է ի նկատի ունենալ, որ եկեղեցին կառուցվել է ավելի քան 20 տարի առաջ, երբ տվյալ տարածքը դեռս նման ուրբանիզացում չուներ, ինչպես այժմ: Սակայն նման խնդրի դեպքում՝ հարցը պատկան մարմինների՝ ՀՀ ԱԻՆ լուծման տիրույթում է:

Ինչ վերաբերվում է թափառող շներին, ապա ռեստորանային համալիրի առկայությունը այս հարցը ինքաբերաբար լուծում է, քանի որ այն գործելու դեպքում կբացառվի նրանց առկայությունը այդ տարածքում: Նրանք այժմ այդ տարածքում առկա են, քանի որ տվյալ տարածքը ներկայումս չի օգտագործվում, նույնիսկ կարելի է ասել, որ որոշ առումով անտեսված է: Եվս մեկ անգամ ուզում եմ նշել, որ նախատեսվող կառույցի առկայությունը արդեն իսկ նվազեցնելու է թափառող շների վտանգը: Մյուս կողմից թափառող շների հարցը Երևանի քաղաքապետարանի գործառույթներից է, ինչն իրականացվում է նաև այժմ: Ավելին՝ քաղաքապետարանի ներկայացուցիչն այստեղ ներկա է:

Գորիկ Ավետիսյանը հավելեց, որ տարածքի սեփականատերը կամ կապալառուն կարող է կապ հաստատել Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող թափառող կենդանիների վնասազերծման կենտրոնի հետ և իրենք կգբաղվեն թափառող շների հարցերով՝ պատվաստումներ, ստերջացում և այլն:

Մասնակիցների կողմից բարձրացված բոլոր հարցերին տրվեցին համապատասխան պարզաբանումներ և պատասխաններ: Հանդիպումն ամփոփեց

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման բոլոր մասնակիցներին:


Մասնակիցների ցուցակը, հանրային քննարկման ընթացքում արված լուսանկարները և տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանատու
և վարող՝



Գ. Ավետիսյան, Երևանի
քաղաքապետարանի
բնապահպանության
վարչության գլխավոր
մասնագետ

Արձանագրող՝



Ք. Սահակյան, բնապահպան

Ձեռնարկող՝



Ա. Մինասյան, «Վելլի Բեյ» ՍՊԸ



« 19 » փետրվարի, 2020

Երևան քաղաքի Միկոյան 9/3 հասցեում ռեստորանային համալիրի կառուցման նախագծի վերաբերյալ

Մասնակիցների ցուցակ

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Մոխարյան Մանուկ	«Մոխարյան» ընկերության Կառավարիչ	093 43 4858	
2.	Մեծկալիցյան Բեատրիս	Քեթեթեթ առևտրային	(094) 52 9322	
3.	Վոլոգդյան	Երևանի քաղաքապետարանի Քաղաքապետի օգնական	098-33-43-81	
4.	Մարտիրոսյան Զեյնե	Էսթ. Էսթի ընկերություն	055-354-854	
5.	Քարամյան Կարեն	Էսթ. Էսթի ընկերություն	091 43 3226	
6.	Վոլոգդյան Ռաբինդր	«Մոխարյան» ընկերության Վարչակազմի ղեկավար	091 20 5234	
7.	Կեղևանյան Սարգիս	ՔՊՎ. թվ. 172-232	093-88-79-91	
8.	Հրաչյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	099 07 14 22	
9.	Լուսինյան Մարգարիտ	Էսթ. Էսթի ընկերություն	077 93 3626	
10.	Սարգսյան Վահագն	Վճարի աշխատակից	044 22 01 01	
11.	Վերնիկյան Ստեփան	Վճարի աշխատակից	099.21.40.57	
12.	Մանուկյան Մանուկ	Քաղաքապետի օգնական 2/22	093071339	
13.	Սարգսյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	077 44 4505	
14.	Սարգսյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	077 40-11-16	
15.	Սարգսյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	093 94 82 90	
16.	ՅԱԱ Երևանի քաղաք	Էսթ. Էսթի ընկերություն	055-7200-03	
17.	Քարամյան Կարեն	ՔՊՎ ընկերություն	091 40 00 59	
18.	Սարգսյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	098-283393	
19.	Սարգսյան Վահագն	Էսթ. Էսթի ընկերություն	094 64 59 29	
20.				